15.04.26 - 15.04.26
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն

Ս.թ. ապրիլի 15-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում Ժողովրդագրական հետազոտությունների և կրթության կենտրոնի նախաձեռնությամբ տեղի կունենա ազգային փոխանցումային հաշիվների ժամանակային վերլուծությունների արդյունքների ներկայացում:

«Ամերիա» կառավարման խորհրդատվական ծառայության կատարած վերլուծությունը՝ իրականացված Մեծ Բրիտանիայի և «ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ»-ի ֆինանսական աջակցությամբ, նպատակ ունի բացահայտելու տարբեր տարիքային խմբերի միջև տնտեսական հոսքերի առանձնահատկությունները, գնահատելու արտադրության և սպառման կառուցվածքը կյանքի ընթացքում, ինչպես նաև ներկայացնելու աշխատաշուկայի, սոցիալական պաշտպանության և ժողովրդագրական միտումների փոխկապակցվածությունը:

Միջոցառմանը կներկայացվեն վերլուծության հիմնական արդյունքները, դրանց կիրառման նշանակությունը՝ փաստահենք քաղաքականությունների մշակման, սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործման և ժողովրդագրական մարտահրավերներին արձագանքող ծրագրերի ձևավորման համատեքստում:

Օրակարգը՝ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am